նու գործնական եւ տեսական երկրագործական կրթարանին եւ Տնօրէն Արամեան երկսեռ երկրորդ. վարժարանին Քաղկեդոնի, Տնօրէն խմբագրապետ (?) «Գիտնական Շարժում» ամսօրեայ հանդիսի, եւ այլն, եւ այլն, եւ այլն (!!??)։

Եւ ալպիսի հոսոսներին «Աղբիւրի» խմբագիրը դնում է եւրոպացիների հետ մի շարքում!...։

«Նոր լուրեր» և «Ապ և ապք» բաժիններում լառաջ են բերուած «Հանդէս Ամսօրեայից» մի քանի կտորներ, որոնք պէտք է փոփոխուէին և լարմարացուէին «Աղբիւր»-ում արտատպելիս։ «Զուարճալիք» և «Ապ և ապք» բաժինները լաւ են 3 №-ում։

Գալով «Աղբիւրի» երկրորդ՝ դաստիարակների համար հրատարակող՝ բաժին, պէտք է նկատել, որ ոչ մի լօդուած դաստիարակութեան և առհասարակ մանկավարժութեան վերաբերեալ նորա մէջ չէք գտնիլ։ Դաստիարակների համար միւնոյն է թէ այդ բաժինը գոյութիւն չունի։ «Խառն լուրերի» և «խմբագրական պատասխանների» համար «Դաստիարակների համար» բաժին ունենալն աւելորդ է, իսկ մի քանի լօդուածներն էլ, որոնք դետեղուած են այդ բաժնում, ոչինչ կապ չունենալով դաստիարակութեան հետ, շատ շատ կարող էին տեղ գտնել մի որ և է լրագրի էջերում։ Աւելի լաւ կը լինէր, եթէ «Աղբիւրի» խմբագրութիւնը ձեռք վերցնէր բոլորովին այդ բաժնից, քանի որ երկար տարիների միջոցին չը կարողացաւ նորան տանել ինչպէս հարկն է, և իր ուշքը դարձնէր ամսագրի առաջին՝ երեխաների համար բաժնի վրայ, որի մէջ աւելի լաւ ընտրուած նիւթերը դասաւորուէին երկու առանձին մասերում. մէկում նիւթերը լարմար և մատչելի լինէին 8—12 տարեկան երեխաների հասկացողութեան, միւսում աւելի մեծ՝ պատանեկականին մօտ հասակին։ Նիւթերը ընդունելիս պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ տպւում է երեխաների համար, որոնց խելքը մի անշունչ գրատախտակ չէ, որի վրայ ամեն բան կարելի է գրել և սպունգով ջնջել։ Շատ ցանկալի է, որ լրջօրէն ուշադրութիւն դարձնի «Աղբիւրի» ներքինի վրայ, և հասցնել նրան առնւազն նոյն կատարելութեան, ինչպիսին է նորա արտաքինը։

Լ. Ս.

ՆՈՐ ՍՏԱՑԻԱՆ ԳՐՔԵՐ

1) Սահակեանց Սիսակ քահանայ—Սրբազան պատմութիւն Հին-Ուխտի։ Աշակերտաց և աշակերտուհեաց համար։ Հատոր I. Տփխիս, տպարան Ռոտինեանցի, 1888 թ.

2) Նոյն հեղինակ—Դասագիրք կրօնի։ Ուղեցոյց հայ կրօնուսուցների համար։ Հին-Ուխտի մշակութիւնը։ Հատոր I. Նոյնտեղ. 1888 թ.

3) Նոյն հեղինակ—Սրբազան պատմութիւն Նոր-Ուխտի։ Հատոր II. Նոյնտեղ. 1889 թ.

4) Գաբրիէլի Անդրէաս—Բնաւորութեան կրթութիւնը (թարգմ. Գ. Շահբուշաղեանցի)։ Թիֆլիս, տպարան Մարտիրոսեանցի. 1889 թ.